ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ակտիվ ուսումնառությունը և նրա արդյունավետությունը

ԿԱՏԱՐՈՂ՝ Մելանյա Մնացականյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……. 2
2. Ուսուցման մեթոդներ …… 3
3. Ակտիվ ուսուցում ……... 6
4. Ինչ է նշանակում ակտիվ ուսուցման մեթոդներ …….. 8
5. Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակը …….. 9
6. Ակտիվ ուսուցման մեթոդների արդյունավետությունը …….. 10
7. Ինչ կրթական խնդիրներ են լուծում ակտիվ ուսուցման մեթոդները ... 11
8. Ակտիվ ուսուցման ձևեր ……..... 12
9. Եզրակացություն ……. 16
10. Գրականության ցանկ …… 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գիտելիքը ուժ է»
Ֆրենսիս Բեկոն

Գիտելիքն առաջնային է, որովհետև գիտելիքն է տալիս այն ուժն ու համարձակությունը, որը չի կարող տալ և ոչ մի բան: Մարդկային հասարակության զարգացման, առաջընթացի շարժիչ ուժը գիտելիքն է՝ կարողությունների, հմտությունների, արժեքների ամբողջականությունը: Իսկ մեր՝ ուսուցիչներիս գերխնդիրն է օգտագործել ուսուցման տարբեր մեթոդներ, ձևեր գիտելիքը առավելագույնս աշակերտներին հասցնելու համար:

Իմ աշխատանքային փորձի ընթացքում կիրառել եմ բազմաթիվ մեթոդներ և՛ պասսիվ ուսուցման, և՛ ակտիվ ուսուցման: Այնուամենայնիվ գլխավոր տեղը տալիս եմ ակտիվ ուսուցմանը, քանզի այն մեծացնում է հետաքրքրությունը առարկայի եւ դասի նկատմամբ:

Ուսուցման մեթոդները պետք է կիրառել ոչ թե ուղղակի, այլ ճիշտ ընտրված դասի կամ թեմայի համար՝ ակնկալելով արդյունավետություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցումը ուսուցչի և աշակերտի միջև տեղի ունեցող փոխներգործուն գործընթաց է, որի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի և հմտությունների, կարողությունների յուրացում և փոխանցում:

Ուսուցումը կոմպլեքս ու բազմակողմանի հանձնարարություն է:

Ուսուցման գործընթացում գոյություն ունեն մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընկալելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ և այլն:

Պասսիվ մեթոդ

Սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է, իսկ աշակերտները պասսիվ լսողի դերում են և կատարում են ուսուցչի հրահանգները:

Սովորողի և ուսուցչի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, թեմատիկ աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն ունի իր դրական կողմը՝ տալիս է մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում:

Պասսիվ մեթոդի դրական կողմերը

- Աշակերտների հարցադրումները (հարցեր են ուղղում պատմողին դասի այն մասից, որը չի պատմվել)

- Կարևոր լրացումներ (լրացումը կատարվում է աշակերտի կողմից իր բառերով, ոչ գրքային)
- Դիտողություններ (յուրաքանչյուր աշակերտ կարող է իր տեսակետը հայտնել տվյալ թեմայի վերաբերյալ)
- Բանավեճ (երբ անցնում ենք այնպիսի թեմաներ, որտեղ առկա են խնդիրների լուծման տարբեր եղանակներ)

Ակտիվ մեթոդ

Սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա դասապրոցեսի, կրթական գործունեության ընթացքում:

Այստեղ սովորողները ոչ թե պասսիվ, այլ ակտիվ մասնակիցներ են:

Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը ուսուցիչն է, ապա այստեղ աշակերտն ու ուսուցիչը հավասար իրավունքների դաշտում են:



Ինտերակտիվ մեթոդ

Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն նրանք ունեն բավականին տարբերություններ:

Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ինտերակտիվ նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ որ մեկի հետ երկխոսության մեջ: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը:

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ակտիվ ուսուցումը ուսուցչի և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչը և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասսիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

Եթե պասսիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ – աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա է՝ սուբյեկտ - սուբյեկտային փոխհարաբերություններ:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրում, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական պասսիվ մեթոդները, ինչպիսիք են պատմելը, բացատրելը և այլն:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Ակտիվ ուսուցման մեթոդների նպատակն այն է, որ աշակերտներին ներգրավեն ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծեն շահագրգռվածություն

ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնեն կիրառել ձեռք բերված գիտելիքները:

Ակտիվ ուսուցման մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն հոգեկան գործընթացները՝ խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն:

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ:

Լ.Ս.Վիգոդսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:

Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և, ամենակարեւորը, զարգանում է խոսքը:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ:

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ակտիվ ուսուցման նպատակներն են

- ուսումնական դրական խթանի ձևավորում
- աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում
- կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում
- ինքնագործունեության խթանում
- ճանաչողական գործընթացների զարգացում – խոսք, մտածողություն, հիշողություն
- ուսումնական նյութի արդյունավետ յուրացում
- աշակերտի անհատական հաղորդակցական ոլորտի զարգացում
- աշակերտի անհատական հնարավորությունների բացահայտում և զարգացում
- ինքնուրույն աշխատելու համար հմտությունների զարգացում

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ակտիվ ուսուցման մեթոդները

- նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացմանը
- կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ
- ապահովում են աշակերտների ակտիվությունը, մտածողական և պրակտիկ գործունեության բազմազանությունը
- հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, աշակերտների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի վրա

Ակտիվ ուսուցման մեթոդների արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

ԻՆՉ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԼՈՒԾՈՒՄ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից

- ուսումնական դրական խթանի ձևավորում
- աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում
- աշակերտների ներգրավածություն ինքնուրույն իմացական գործունեության մեջ
- աշակերտների ակտիվ ներգրավում կրթական գործընթացին
- գիտելիքների և հմտությունների ձեռքբերում ուսումնառության ընթացքում
- ստեղծագործական մտքի զարգացում
- ճանաչողական գործընթացների զարգացում
- ինքնագործունեության խթանում
- հմտությունների զարգացում ինքնուրույն աշխատանքի համար

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՁԵՎԵՐ



<u>Խմբային աշխատանք</u> – ուսուցման մի ձև է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում

են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու:

Խմբային աշխատանքով դասի նմուշ (8-րդ դասարան, հանրահաշիվ, Վիետի թեորեմը):

Դասի նպատակները և խնդիրները

- քառակուսի եռանդամի հետ գործողությունների կատարում
- քառակուսային հավասարումների լուծում
- հմտությունների ձևավորում և կիրառում
- Վիետի թեորեմի ընկալում և կիրառում

Մեթոդական նպատակը

Ցույց տալ ակտիվ ուսուցման մեթոդի արդյունավետությունը

Դասի ընթացքը

- կազմակերպչական մաս
- դասարանը բաժանել 5 խմբի: Յուրաքանչյուր խմբի համար ընտրվում է ավագ: Խմբերին բաժանվում են պաստառները: Յուրաքանչյուր խմբի ավագ ընտրում է նախապես պատրաստված թերթիկներից մեկը: Թերթիկների վրա գրված են 4-ական բերված տեսքի քառակուսային հավասարումներ: Խմբերի խնդիրն է լուծել իրենց թերթիկների վրա եղած հավասարումները և ինքնուրույն անել հետևություններ:

Իմաստի ընկալում – պաստառները փակցնել գրատախտակին, լսել բոլոր ավագների ելույթները: Լսել նաև մյուս խմբերի կողմից արված դիտողությունները և առաջարկները:

Կշռադատում – յուրաքանչյուր խումբ պետք է ասի, թե ինչ տվեց իրենց այս մեթոդի կիրառումը:

Գնահատում – տալ բարձր միավոր այն խմբին, որը կարողացել էր գտնել Վիետի թեորեմը:

Գործնական աշխատանք – աշակերտի ինքնուրույն գործունեության տեսակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողությունը: Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է, այլ նաև դրանք գործնականում կիրառել կարողանալը: Աշակերտը պետք է կարողանա կատարել իրեն տրված առաջադրանքը, դնի կոնկրետ նպատակ, գտնի դրանք լուծելու ճանապարհ, պլանավորի իր անելիքը, ստանա արդյունք և կատարի եզրահագում:

Օրինակ՝ աշակերտներին հանձնարարել իրենց լոգարանը սալիկապատելու խնդիրը: Յուրաքանչյուր աշակերտ պետք է կատարի չափումներ, հաշվի ուղղանկյունանիստի կողմնային մակերևույթի և հատակի մակերեսները, հաշվարկի, քանի սալիկ է անհրաժեշտ լոգասենյակը սալիկապատելու համար:

Միջոցառումներ – դրանք որևէ նպատակի համար գործողություն կամ գործողությունների ամբողջություն է: Դրանք նպատակաուղղված են որևէ գաղափարի իրականացմանը կամ որևէ նպատակի հասնելուն:

Դպրոցական միջոցառումների հիմնական մասնակիցներն են աշակերտները և ուսուցիչները: Աշակերտները նորից գտնվում են ակտիվ գործողությունների դաշտում: Կախված ընտրված նպատակից և դրա իրագործմանը հասնելու ուղիներից կարելի ընտրել միջոցառումների տարբեր տեսակներ: Այդպիսի միջոցառումներ են անցկացվում նվիրված «Գիտելիքի օրվան», «Անկախության տոնին», «Հայ զինվորին» և այլն:

Վիկտորինա – գիտելիքների տարբեր ոլորտների վերաբերյալ բանավոր կամ գրավոր հարցերին պատասխանելու խաղ:

Վիկտորինաները հիմնականում տարբերվում են իրարից այն կանոններով, որոնք սահմանում են հերթականությունը, հարցի տեսակը և բարդությունը, հաղթողների որոշման կարգը, ճիշտ պատասխանի համար պարգևատրումը: Վիկտորինաները նպատակահարմար է անց կացնել 7-ից բարձր դասարանցիների միջև:

Էքսկուրսիա «Մենք բոլորս ծնունդով մանկությունից ենք»

Էկզյուպերի

Մարդու դաստիարակության , դրսևորման, զարգացման գործում կարևոր տեղ է զբաղեցնում կրթօջախը՝ դպրոցը, որը սերտորեն փոխկապակցված է ծնող – հասարակություն կապի հետ: Այս եռանկյունու ճիշտ գործելը դրական է ներգործում երեխայի բարոյահոգեբանության վրա:

«Էքսկուրսիա» բառը լատիներենից նշանակում է ուղևորություն, կամ կուլտուր լուսավորչական նպատակ:

Էքսկուրսիան արտադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է, որն ուղղված է սովորողների հոգևոր, ֆիզիկական և գեղագիտական զարգացմանը: Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում և ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները:

Շատ կարևորում եմ էքսկուրսիաները թանգարաններ, պատկերասրահներ, հոգևոր օջախներ, թատրոններ և այլն, որոնք խթան են հանդիսանում զգայուն արժեքների ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոյություն ունեն ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա կապված է այն փաստի հետ, որ դեռ չկա ակտիվ ուսուցման մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Կան նաև ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են հետազոտական աշխատանքը, նախագծային աշխատանքը, ինտերակտիվ սեմինարը, թրեյնինգները, պրոբլեմային ուսուցումը, համագործակցային ուսուցումը և այլն:

Դրանք ամբողջական կրթական միջոցառման կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, որոնց նպատակը մեկն է. *սովորելու գործընթացը դարձնել ավելի դյուրին, հետաքրքիր և ցանկալի:*

Ամփոփելով նշենք, որ ուսուցման պասսիվ, ակտիվ, թե ինտերակտիվ ձևերն ու մեթոդները ուղղված են մի նպատակի՝ այն է գիտելիքների, հմտությունների, արժեքների, ավանդույթների և սովորությունների ձեռքբերմանը:

Դա կոչվում է՝ ***կրթություն:***

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Յու .Ալեյին «Ուսուցման ընդհանուր մեթոդները դպրոցում»
2. Ա. Մ. Սմոլկին «Ակտիվ ուսուցման մեթոդներ»
3. Պ. Պ. Բլոնսկի «Մանկավարժական գործունեությունը և տեսությունը»
4. Ա. Ա. Բալսև «Ուսուցման ակտիվ մեթոդներ»